

Հայաստանի պետական տնտեսագիտական

համալսարանի ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր՝

..... Կ.Լ. Աթոյան

«.....» 2017թ.

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

**Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» (Վիճակագրություն)
մասնագիտության 2017-2018 ուստարվա ասպիրանտուրայի ընդունելության
քննության**

1. Վիճակագրության գիտության առարկան, մեթոդը և խնդիրները:
2. Վիճակագրական դիտարկման ծրագրամեթոդաբանական և կազմակերպական հարցերը:
3. Վիճակագրական դիտարկման ձևերը, տեսակները և եղանակները:
4. Վիճակագրական տվյալների ամփոփում և խմբավորում:
5. Վիճակագրական աղյուսակներ և գրաֆիկներ:
6. Բացարձակ և հարաբերական մեծություններ:
7. Դիսկրետ պատահական մեծություններ, դրանց մաթեմատիկական սպասումը և հատկությունները:
8. Դիսկրետ պատահական մեծությունների դիսպերսիան և դրա հատկությունները:
9. Դիսկրետ պատահական մեծությունների բաշխման օրենքները՝ բինոմական, պուասոնի, հիպերերկրաչափական և այլ բաշխումներ:
10. Անընդհատ պատահական մեծությունների բաշխման ֆունկցիան, դրա հատկությունները:
11. Անընդհատ պատահական մեծությունների հավանականության բաշխման խտությունը:
12. Նորմալ և ստանդարտ նորմալ բաշխումներ: Նորմալ բաշխումը որպես այլ բաշխումների ապրոքսիմացիա:
13. Բաշխման ձևի ցուցանիշներ՝ ասիմետրիա և էքսցես:
14. Ընտրանքային դիտարկման տեսակները: Ընտրանքային դիտարկման սխալները:
15. Միջինի և մասի ընտրանքային բաշխումներ: Պարամետրերի կետային գնահատման մեթոդները:
16. Գլխավոր համակցության մաթեմատիկական սպասման գնահատման վստահելի միջակայքերը հայտնի և անհայտ դիսպերսիաների դեպքում:

17. Ստանդարտ շեղման վստահելի միջակայքերի որոշումը: Հատկանիշի մասի վստահելի միջակայքերի կառուցումը:
18. Պատահական ընտրանքի անհրաժեշտ ծավալի որոշումը:
19. Հիպոթեզների ստուգման ընթացակարգը: Միակողմանի և երկկողմանի թեստեր: Առաջին և երկրորդ կարգի սխալներ:
20. Ընտրանքային միջինի հիպոթեզի ստուգումը:
21. Երկու անկախ և կախյալ ընտրանքների համեմատությունը:
22. F չափանիշի կիրառումը երկու դիսպերսիաների տարբերությունը գնահատելու համար:
23. Միագործոն դիսպերսիոն վերլուծություն:
24. Երկգործոն դիսպերսիոն վերլուծություն:
25. χ^2 չափանիշի կիրառումը երկու և ավելի մասերի հավասարության հիպոթեզը ստուգելու համար:
26. χ^2 չափանիշի կիրառումը անկախությունը ստուգելու համար:
27. Պարզ գծային ռեգրեսիոն հավասարման դուրս բերումը: Ենթադրություններ, մնացորդների վերլուծություն:
28. Ռեգրեսիոն հավասարման ավտոկորելյացիայի չափում: Հիպոթեզների ստուգում: Մաթեմատիկական սպասման գնահատում և անհատական արժեքների կանխատեսում:
29. Բազմակի ռեգրեսիայի մոդել: Մնացորդների վերլուծություն: Մոդելի նշանակալիության ստուգում:
30. Վիճակագրական հետևություններ գլխավոր համակցության ռեգրեսիայի գործակիցների մասին:
31. Ռեգրեսիոն մոդելի բացատրող փոփոխականների նշանակալիության գնահատում:
32. Ֆիկտիվ փոփոխականով ռեգրեսիոն մոդելներ, փոխգործողության էֆեկտներ:
33. Քառակուսային մոդելի կառուցում: Տվյալների ձևափոխում ռեգրեսիոն մոդելներում: Կոլինեարություն:
34. Ռեգրեսիոն մոդելի կառուցման քայլային մոտեցում: Լավագույն ենթաբազմության մեթոդի ընտրություն:
35. Ժամանակային շարքերի վերլուծական ցուցանիշները:
36. Ժամանակային շարքերի դասական մուլտիպլիկատիվ մոդելներ:
37. Ժամանակային շարքերի հարթեցում:
38. Տրենդի հաշվարկը փոքրագույն քառակուսիների մեթոդով և կանխատեսում:
39. Տրենդի հաշվարկը ավտոռեգրեսիայի միջոցով և կանխատեսում:
40. Կանխատեսման ադեկվատ մոդելի ընտրություն:
41. Կանխատեսում սեզոնային տվյալների հիման վրա:
42. Ընդհանուր հասկացություն ինդեքսների մասին և դրանց նշանակությունը սոցիալ-տնտեսական հետազոտություններում:
43. Անհատական և ընդհանուր ինդեքսներ:
44. Բազիսային և շղթայական ինդեքսների համակարգը:
45. Ինդեքսների փոխկապվածությունը:
46. Հաստատուն և փոփոխական բազայով ինդեքսների համակարգը:
47. Կառուցվածքային ինդեքսներ կայուն և փոփոխուն կշիռներով ինդեքսներ:
48. Երևույթների դինամիկայի վերլուծությունը ինդեքսային մեթոդով:

49. Բազմաչափ դասակարգում: Օբյեկտների և կլաստերների մոտիկությունը:
50. Ստորակարգված (իերարխիկ) կլաստերների ընթացակարգերը:
51. Գլխավոր բաղադրիչների (կոմպոնենտների) մոդելը, մաթեմատիկական հիմնավորումը և մեթոդի ալգորիթմը:
52. Գործոնային վերլուծության գծային մոդելը:
53. Բաղադրիչային և գործոնային վերլուծության նախադրյալների տարբերությունը:
54. Գործոնային վերլուծության հիմնական խնդիրները:
55. Դիսկրիմինանտային վերլուծության մեթոդի նկարագրությունը:
56. Դիսկրիմինանտային վերլուծության գծային մոդելը:
57. Դիսկրիմինանտային ֆունկցիայի որակի գնահատումը:
58. Փոխլարվածության աղյուսակները և դրանց տարրերը:
59. Բազմաչափ փոփոխականների միջև կապի չափանիշները: Ասոցացիայի և կոնտինգենցիայի գործակիցները:
60. Կարգային փոփոխականների կապի չափանիշները:
61. Աշխատանքի շուկայի ցուցանիշների բովանդակությունը և վիճակագրության խնդիրները:
62. Աշխատողների ցուցակային թիվը և դրա շարժի ցուցանիշները:
63. Աշխատաժամանակի օգտագործման ցուցանիշները:
64. Ազգային հարստության բովանդակությունը և դրա տարրերի դասակարգումն ու գնահատումը:
65. Հիմնական ֆոնդերի գնահատման տեսակները, դրա մաշվածքի և ամորտիզացիայի ուսումնասիրությունը:
66. Հիմնական ֆոնդերի շարժի և վիճակի ցուցանիշները:
67. Հիմնական ֆոնդերի օգտագործման ցուցանիշները:
68. Մարքավորումների հզորության և օգտագործման ցուցանիշները:
69. Նյութական շրջանառու միջոցների օգտագործման արդյունավետության ցուցանիշները:
70. Տնտեսական գործունեության արդյունքների ցուցանիշներն ազգային հաշիվների համակարգում:
71. Ազգային հաշիվների համակարգի հիմնական հասկացությունները:
72. ՀՆԱ-ի հաշվարկման մեթոդները:
73. ՀՆԱ-ի կառուցվածքային տեղաշարժերի և կառուցվածքային տարբերությունների գնահատումը:
74. Ազգային հաշիվների կազմման և վերլուծության մեթոդաբանությունը:
75. Մակրոտնտեսական ցուցանիշների միջազգային համադրումները:
76. Բնակչության թվաքանակի և տեղաբաշխման ուսումնասիրությունը:
77. Բնակչության շարժի ցուցանիշները:
78. Բնակչության հեռանկարային թվի հաշվարկման մեթոդները:
79. Արտադրանքի թողարկման վիճակագրության ցուցանիշները:
80. Արտադրության և շրջանառության ծախքերի հասկացությունները և դրանց դասակարգումը:
81. Արտադրանքի ինքնարժեքի մակարդակի և դինամիկայի ցուցանիշները:
82. Աշխատավարձի ֆոնդի վիճակագրական վերլուծությունը:
83. Կազմակերպության ֆինանսական արդյունքի և ֆինանսական վիճակի ցուցանիշները:

84. Գների մակարդակի և դինամիկայի ցուցանիշները:
85. Դրամաշրջանառության վիճակագրական ցուցանիշները:
86. Արտադրության տնտեսական արդյունավետության ընդհանրական և մասնակի ցուցանիշները:
87. Աշխատանքի արտադրողականության մակարդակի և դինամիկայի ցուցանիշները:
88. Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վիճակագրական ցուցանիշների համակարգը:
89. Բնակչության կենսամակարդակի ցուցանիշների համակարգը:
90. Բնակչության եկամուտների աղբյուրները և սպառման ուղղությունները:
91. Բնակչության եկամուտների և ծախսերի շերտավորման վիճակագրական ուսումնասիրությունը:
92. Բնակչության սոցիալական ապահովության վիճակագրական ցուցանիշները:
93. Բնակչության սոցիալական պաշտպանվածության վիճակագրական ցուցանիշները:
94. Բնակչության բնակարանային պայմանների ցուցանիշները:
95. Հանգստի և զբոսաշրջության վիճակագրության ցուցանիշների համակարգը:
96. Առողջապահության վիճակագրության ցուցանիշների համակարգը:
97. Կրթության վիճակագրության ցուցանիշների համակարգը:
98. Մշակույթի վիճակագրության ցուցանիշների համակարգը:
99. Իրավական վիճակագրության ցուցանիշների համակարգը:
100. Ծառայությունների շուկայի վիճակագրական ցուցանիշները:

Վիճակագրության ամբիոնի վարիչի
Ժամանակավոր պաշտոնակատար
20.05.17թ.

/Ա.Մ. Քթոյան/